

## ՕԳԻԻՍՏ ԿՕՆՏ <sup>\*)</sup>

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՐԱ ԿԵԱՆՔԻ ՈՒ ԳՐՈՒԱԾՔ-  
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

ՆՐԸ ԺՆՆՓԵԱՆ ՀԵՐԻՐԵՄԵԱԿԻ ԸՌԻԹՈՎ

II.

### ԴՐԱԿԱՆ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ.

Իսկապէս փիլիսոփայութիւնը գործ ունի տիեզերական խընդիրների հետ, որոնք գուցէ գործնական կեանքի համար ոչ մի նշանակութիւն չունենա: Բայց մարդկային սիրտը, միտքը, հոգին, չեն բաւականանում լոկ ապրուստի խնդիրներով: Վերջիններիս անհրաժեշտութիւնը ոչ ոք, ի հարկէ, չէ կարող հերքել: Ամեն բանից առաջ մարդկանց հարկաւոր է առողջ սնունդ, լարմար բնակարան և այլն: Հասարակութիւնը պիտի ունենայ լաւ հիմնարկութիւններ, փոխադարձ յարաբերութեան լարմարաւոր սկզբունքներ (օրէնքներ, լաւն մտքով).... բայց սրանք բոլորը չեն բաւականացնում մարդուն: Նա ծաւալ է ճշմարտութեան համար.... Երբ նա նիւթապէս ճնշուած է, հաց չունի, ապահով կեանքից զուրկ է, խառն է գլուխը, նա բաւականանում է առօրեայ մանրիկ խնդիրներով: Բայց հէնց որ փորը կշտացաւ, իրան հանգիստ զգաց,... առաջ է գալիս իսկոյն գաղափարական պահանջը: Նա նայում է դէպի երկինք, օդային ովկիանոսի մէջ... ռոտեղ է նրա հիմքը... խոր ու աւելի խոր է թափանցում, բայց սահմանները ոչ միայն աչքով չէ տեսնում, այլև մտքի ամենահամարձակ թռիչքը չէ կարողանում սահմաններին հասնել:

\*) Տես «Ազդադրական Հանդէս», գիրք Գ.



Մարդու մէջ շատ խորն է ճշմարտութեան ծարաւը, նա կամենում է գիտենալ, ամեն բան գիտենալ, թափանցել երևոյթների խորքերը, ըմբռնել նրանց էութիւնը: Ուստի երկար դարերի ընթացքում մարդիկ գիտելով, մտածելով, հետազօտութիւններ անելով, գիտութիւններ հիմնելով, երկու նպատակ են ունեցել, որոնցից մէկը «երկրային», իսկ միւսը «երկնային» բովանդակութիւն է ունեցել: Մի կողմից մարդիկ իրանց ապրուստի, կենսական պիտոյքների համար աւելի ու աւելի լարմար միջոցներ են որոնել, միւս կողմից կամեցել են որոշել իրանց անձնաւորութեան դիրքը, նշանակութիւնը, էութիւնը... Ինչո՞ւ համար ենք մենք ապրում, իսկ եթէ ապրել է հարկաւոր, էլ ինչո՞ւ ենք այնպէս շուտ մեռնում, ինչ է դառնալու մեզանից մեռնելուց յետոյ... Որտեղից ենք մենք ծագել, որտեղից և ինչպէս է առաջ եկել ամբողջ տիեզերքը, ովքեր են նրա ստեղծողները, ինչո՞վ պիտի վերջանայ այդ բոլորը և այլն և այլն.... Ահա մի շարք հարցեր, որոնք թերեւ անմիջական կապ չունին ապրուստի խնդիրների հետ, բայց և այնպէս՝ մարդկային սիրտը նրանց լուծումն է պահանջում: Եւ ահա առաջ են եկել մի շարք կրօնական կամ փիլիսոփայական աշխարհայեցողութիւններ, որոնք ձգտել են լուծել լիշեալ հարցերը, բայց, Կօնտի կարծիքով, ոչ մի հաստատ եզրակացութեան չեն հասել, ոչինչ չեն կարողացել պարզել, որովհետեւ մարդկային միտքը չէ կարող թափանցել բնութեան խորքերը, չէ կարող ըմբռնել երևույթների սկզբնապատճառները: Կօնտը, որպէս և նրանից առաջ եղած մի շարք փիլիսոփաներ, ընդունում են, որ մենք չենք կարող հասկանալ երևոյթների էութիւնը, այլ միայն ըմբռնել նրանց այնպէս, ինչպէս մեզ թւում են: Մի փոքր աւելի կը պարզենք այս կէտը:

Կարտեզիան փիլիսոփայութիւնը որպէս հիմք մեր գիտելիքի ընդունում է մարդու «ես»-ի գոյութիւնը: «Ես գոյութիւն ունեմ» ահա այն փաստը, որի վրայ հիմնում է մարդ իր բոլոր իմաստութիւնը: Մենք ինչից գիտենք, օրինակ, թէ ծիածանը զանազան գոյներ ունի: Մենք անմիջապէս զգում ենք այդ (տեսնում ենք): Կարելի է՝ մենք սխալ ենք զգում, կարելի է ծիածանը բոլորովին դոյնդոյն չէ, այլ մեզ է ալդպէս թւում, այդ բոլորը կարելի է, բայց և այնպէս մնում է հաստատ այն, որ մենք զգում մտածում ենք (սխալ ենք զգում թէ ուղիղ, այդ ուրիշ հարց է): Եւ որովհետեւ մենք զգում ենք, մտածում ենք, կը նշանակէ մենք գոյութիւն ունինք, որովհետեւ չէ որ մի էակ պիտի լինի, որը այդ զգացողութեան կենդրոնն է, զգացող կամ մտածողն է: Եւ ահա մեր



եւր, ալսինքն մենք, զանազան զգացողութիւններ ժիջոցով զա-  
ղափար ենք կազմում մեզանից զատ գոլութիւն ունեցող առար-  
կաների կամ երևոյթների մասին: Մեր կազմած զաղափարը համա-  
պատասխան է մեր էութեանը: Առարկաները մեզ թւում են ծանր  
կամ թեթեւ, քաղցր կամ դառն, տաք կամ սառն, սև կամ սպի-  
տակ և այլն և այլն: Բայց այդ լատկութիւնները ուրիշ բաներ չեն,  
քայց եթէ մեր ստացած տպաւորութիւնները: Իսկ եթէ մեր զգա-  
ցումները մէջ չխառնենք, առարկան ինքն ըստ ինքեան, առանց  
մեր նեարդերի հետ գործ ունենալու, ոչ ծանր է, ոչ թեթեւ, ոչ  
քաղցր է՝ ոչ դառն, ոչ սև է՝ ոչ էլ սպիտակ: Ի՞նչ է նա ինքն ըստ  
ինքեան: Չգիտենք: Ուրեմն ինչոր մենք գիտենք, այդ աչն տպա-  
ւորութիւններն են, որ մենք ստանում ենք մեր զգացողու-  
թեանց ժիջոցով և մենք ըմբռնում ենք երևոյթների, այդպէս ա-  
սած, միայն արտաքին կողմը, որովհետև նրանց էութեան մասին  
ոչինչ չեն հաղորդում մեզ մեր աչքերը, ականջները և այլ զգայա-  
րանները: Այդպիսի երևոյթները միայն պիտի մարդկային հետազո-  
տութեան նիւթ լինին, որովհետև աւելի խորը թափանցել ան-  
հնար է: Բայց ինչ կարող ենք գիտենալ մենք հէնց այդ երևոյթ-  
ների մասին, որպէս պիտի ուսումնասիրենք նրանց....

Հետազօտելով մարդկային մտքի զարգացումը նրա գործու-  
նէութեան զանազան ասպարէզներում—ասում է Աօնտը—սկսեալ  
նրա առաջին ամենահասարակ արտայայտումներից մինչև մեր օրե-  
րը, ես գտայ, որպէս կարծում եմ, մեծ հիմնական օրէնքը, որը  
ղեկավարում է նրան (մտքի զարգացման) անփոփոխ անհրաժեշ-  
տականութեամբ: Այդ օրէնքը կախանում է նրա մէջ, որ մեր հիմ-  
նական տեսութիւններից իւրաքանչիւրը, մեր գիտութեանց իւրա-  
քանչիւր ճիւղը անցնում է հետզհետէ զարգացման երեք աստի-  
ճանով, որոնք են՝ աստուածաբանական, որ հիմնուած է երևակա-  
լութեան գործունէութեան վրայ, բնազանցական կամ վերացական  
և գիտական կամ դրական: Ուրիշ խօսքով ասած՝ մարդկային միտ-  
քը իր բնութեան համեմատ, իւրաքանչիւր հետազօտութեան շրջա-  
նում լաջորդարար օգտւում է վերոյիշեալ երեք եղանակներով, ո-  
րոնք էապէս տարբեր են իրարից և նոյն իսկ հակառակ: Այս-  
տեղից ծագում են երեք տեսակի աշխարահայեցողութիւններ, որոն-  
ցից առաջինը մարդկային մտքի համար ծառայում է որպէս նա-  
խագուռ, երկրորդը միայն անցողական աստիճան է կազմում, իսկ  
երրորդը կազմում է նրա վերջնական, բոլորովին հաստատուն  
դրութիւնը:

Դրական փիլիսոփայութեան հիմնական գիծը կախանում է



նրա մէջ, որ նա բոլոր երևութիւնները բնութեան անփոփոխ օրէնք-  
ներին հպատակ է համարում: Նրա բոլոր աշխատութիւններին  
հպատակն է գտնել այդ օրէնքները և ըստ կարելոյն քննել  
նրանց թիւը: Իսկ այդպէս անուանուած սկզբնական կամ վերջնա-  
կան պատճառների հետազոտութիւնը նա մեզ համար կատարելա-  
պէս անմատչելի և անհպատակ է համարում: Դրական հետազո-  
տութիւնը աշխատում է միշտ միայն ճիշտ վերլուծել երևութ-  
ների ծագման հանգամանքները և կապել նրանց իրար հետ չափոր-  
դականութեան և նմանողութեան չարաբերութիւնների հիման վրայ:

Այդ միտքը պարզելու համար, Կօնտը օրինակ է բերում ձգո-  
ղականութեան օրէնքը: Տիեզերքի ընդհանուր երևութիւնները բացա-  
տրուած են, որքան այդ հնարաւոր է, Նիւտոնի ձգողականութեան  
օրէնքով: Այդ գեղեցիկ տեսութիւնը ցոյց է տալիս, որ աստղա-  
բաշխական երևութիւնների ամբողջ ահագին քանակութիւնը ուրիշ  
բան չէ, բաց եթէ բոլոր հիւլէներին առ միմեանց ձգտելը: Միևնոյն  
երևութիւնն է առաջանում այն, որ մեր երկիրը քարշում է դէպի  
իրան բոլոր առարկաները: Այդքանը պարզ է ամենքի համար: Իսկ  
այն հարցի որոշումը, թէ ինչ բան է ձգողականութիւնը ինքն ըստ  
ինքեան, և ինչ է ձգողականութեան պատճառը, պատկանում է  
հարցերի խմբին, որոնց Կօնտը համարում է կատարելապէս ան-  
վճռելի և դրական փիլիսոփայութեան շրջանին չվերաբերող, ուստի  
և նրա որոշումը թողնում է «աստուածաբանների երևակայու-  
թեան» կամ «բնազանցազէտների դատարկամտութեան»:

Ձգողականութեան օրինակից բաց Կօնտը աւելորդ չէ համա-  
րում բերել և թերի մասին եղած գաղափարը: Ֆուրիէի հետազոտու-  
թիւնները տաքութեան տեսութեան մասին հաստատում են Կօնտի  
կարծիքը: Ֆուրիէն իր աշխատութիւնների մէջ, որոնք ունին վե-  
րին աստիճանի դրական բնաւորութիւն, որոշել է տաքութեան  
երևութիւնների խիստ կարևոր և ճիշտ օրէնքները, ըստ որում նա ոչ  
մի անգամ չէ մտել տաքութեան ներքին բնաւորութեան վերա-  
բերող դատողութիւնների մէջ: Այնուամենայնիւ նա վճռում է իր  
գրուածքի մէջ շատ կարևոր հարցեր, որոնցից ոմանք նոյն իսկ  
մինչև այն օրը զարթնած չեն եղել—պարզ ապացոյց, որ մարդ-  
կային միտքը, չգրաւուելով իր համար անհասանելի խնդիրներով և  
սահմանափակուելով զուտ դրական հետազոտութիւններով, կարող է  
գտնել նրանցում անսպառ սնունդ ամենալուրջ դործունէութեան  
համար:

Դժուար է ճիշտ որոշել, թէ երբ է կատարուել մտածողու-  
թեան եղանակի այդպիսի կերպարանափոխութիւնը: Միայն կարե-



լի է վստահութեամբ ասել, որ նա կատարուել է աստիճանաբար և փոքր առ փոքր, սկսելով Արխատոսելի և Ալէքսանդրեան դպրոցի աշխատանքներից, իսկ լետու, երբ արաքները մտցրին Արևմտեան Եւրոպայում բնական գիտութիւնները: Բայց մեծ զարկ են տուել դրական մտածողութեան եղանակին Բէկօնի մեթօդօլօգիական կանոնները, Դէկարտի տեսութիւնները և Գալիլէյի գիւտերը, որոնց ազդեցութիւնից դրական փիլիսոփայութեան ոգին սկսեց պարզապէս հակառակել աստուածաբանական և բնազանցական ոգուն: Եւ իսկապէս այդ ժամանակ դրական տեսութիւնները բոլորովին ազատուեցին սնահաւատ և սխօլաստիքական հայեցողութիւնների խտունուրդից, որոնք շատ թէ քիչ գոյութիւն ունէին նախընթաց բոլոր աշխատութիւնների մէջ: Այդ երևելի ժամանակամիջոցից սկսեալ դրական փիլիսոփայութեան առաջընթաց շարժումը և աստուածաբանական ու բնազանցական փիլիսոփայութեանց անկումը պարզ նկատուում են: Աւերջապէս սոյն երևույթը արտայայտուեց այնպիսի կտրական ձևով, որ այժմ իւրաքանչիւր հետազօտող, որ մեր դարի ոգին ըմբռնում է, պիտի խոստովանուէ, որ մարդկային մտքի վերջնական նշանակութիւնը կայանում է դրական հետազօտութեանց մէջ և պիտի խուսափէ դատարկ տեսութիւններից և անհիմն մեթօդներից, որոնք պիտանի էին միայն սկզբնական փորձերի համար:

Արպէս ընթերցողը տեսնում է, Կօնտը ինքը խոստովանում է, որ դրական գաղափարներ արտայայտում էին ոմանք թէ իրանից առաջ և թէ իր օրերում: Բայց որքան էլ այդ գաղափարները պարզ ու բնորոշ լինէին, այնուամենայնիւ մնում էին ցրուած դրութեան մէջ: Կօնտը միացրեց նրանց, ի մի հաւաքեց և ամբողջութիւն կազմեց. հէնց սրանումն է կայանում Կօնտի դերը դրական փիլիսոփայութեան զարգացման գործում: Շատերն էին մշակում դրական գիտութիւնները, բայց ոչ ոք գաղափար չկազմեց այն փիլիսոփայութեան մասին, որը պիտի լառաջ գար գիտութիւնների կազմակերպւելուց: Կօնտից առաջ էլ կային գիտնականներ, որոնք մտածում էին թէ անհրաժեշտ է գիտական մեթոդը մտցնել հետազօտութեան բոլոր ասպարէզների մէջ, բայց ոչ ոք չէր տեսնում, թէ այդ ինչպէս պիտի իրականանար: Դրական փիլիսոփայութեան նիւթը Կօնտը ժառանգել էր ուրիշներից, իսկ այդ նիւթերի կազմակերպութիւնը Կօնտի գործն էր (Լիւիս): Այնպէս որ թէև լամենայն դէպս Կօնտը չէ կարող համարուել դրական ուղղութեան հիմնադիրը, բայց նրան ընդհանրացնողը, ժողովրդականացնողը, նրան ամեն տեղ տիրապետող դարձնողը՝ Կօնտն է: Նա նոյն դիրքն ունի



նորագոյն փիլիսոփայութեան պատմութեան մէջ, որպիսին Ադամ Սմիտը քաղաքատնտեսութեան պատմութեան մէջ կամ Լափուազիէն բնագիտութեան մէջ \*)։ Ուրիշ խօսքով ասած, թէև Կօնտը չէ կարող համարուել դրական մեթոդի հիմնադիր, բայց նրան կարելի է համարձակ կերպով չատկացնել դրական փիլիսոփայութեան ստեղծողի կամ կազմակերպողի պատիւը։ Կօնտն է ամենից առաջ և ամենից չափող կերպով փորձել՝ կազմել մի ընդհանուր աշխարհահայեցողութիւն, հիմնուելով լոկ դրական հետազօտութիւնների վրայ, այսինքն առանց մէջ խառնելու հաւատալու կամ երևակայելու կարօտ գաղափարները։

Սակայն դրական փիլիսոփայութիւնն պսելով, չպէտք է հասկանալ դրական գիտութիւնների միացումը, կամ համախմբումը (էնցիկլօպեդիան)։ Կօնտը ինքը զգուշացնում է այդ մասին։ Դրական փիլիսոփայութեան մէջ չեն արժարժուում գիտութիւնները որպէս առանձին շրջանների ուսումնասիրութիւններ, այլ դրական փիլիսոփայութիւնը, այդպէս ասած, գիտութիւնների գիտութիւնն է։ Նա ինքն ըստ ինքեան մի գիտութիւն է, որի նպատակն է կապ ստեղծել բոլոր միւս գիտութիւնների մէջ, հաւաքել նրանց սմենքին մի ընդհանուր դրօշակի տակ։ Դրական փիլիսոփայութեան առարկան է՝ քննել իւրաքանչիւր գիտութեան յարաբերութիւնը դէպի դրական փիլիսոփայութիւնը, այսինքն հետազօտել իւրաքանչիւր գիտութեան հիմնական եղանակները և գլխաւոր եզրակացութիւնները։ Այդպէս հասկացուած փիլիսոփայութիւնը, Կօնտի ասելով, մարդկային մտքի չառաջընթացութեանը կը բերէ չորս տեսակ օգուտներ։

1. Դրական փիլիսոփայութեան ուսումնասիրութիւնը ծանօթացնելով մեզ մտաւոր ընդունակութիւնների գործողութեանց արդիւնքների հետ, կը տալ մեզ միակ խելացի միջոցը՝ մարդկային մտքի տրամաբանական օրէնքները գտնելու համար, մինչդեռ այդ

\*) Այն խնդիրը, որ Կօնտը վերցրել էր իր վրայ, կայանում է նրանում, որ փիլիսոփայական մտածողութեան և մեթոդին պէտք է տալ աւելի կատարեալ ձև և կազմակերպութիւն և ի գործ դնել նրան՝ այն երևոյթների դասակարգերի ուսումնասիրութեան համար, որոնք դեռ չէին ուսումնասիրուել դիտնական եղանակով։ Այդպիսի ձգտումը շատ փառահեղ է և նրան իրականացնելու փորձը մի ձեռնարկութիւն է, որ արժանի է հիացման և համակրութեան։ Այդ գաղափարի արժարժելու մէջ Կօնտը ցոյց տուեց հայեացքի նշանաւոր լայնութիւն, անսովոր ինքնուրոյնութիւն, ահագին հնարամիտութիւն և արտաքույ կարգի ընդունակութիւն՝ ընդհանրացումներ անելու։ Սպենսէր։



օրէնքները որոնւում էին առաջ անհապատակ ճանապարհներով: Տրամաբանութիւնը Աօնտից առաջ հիմնում էին հոգեբանութիւն կոչուած գիտութեան վրայ, որը կալանում էր ինքն իրան գիտելու մէջ: Օրինակ-հասկանալու համար, թէ մենք ինչպիսի օրէնքներով ենք մտածում, պիտի մենք ինքներս մեզ գիտենք մեր մտածողութեան ժամանակին: Աօնտի կարծիքով՝ այդ անհնար է: Մարդ չէ կարող մտածել մի առարկայի վրայ և միևնույն ժամանակ գիտել, թէ ինքը ինչպէս է մտածում: Ուրեմն անհիմն է և հոգեբանութիւն կոչուած գիտութիւնը, որի վրայ հետեապէս չէ կարելի հիմնել տրամաբանութիւնը. բայց տրամաբանական օրէնքները մենք կարող ենք գտնել, եթէ հետազօտենք, թէ ինչպէս են մարդիկ գիտութիւնները մշակել, ինչպէս են որոշ եղրակացութիւններ հանել իրանց փորձերի կամ գիտողութիւնների հիման վրայ: «Այնպէս — ասում է Աօնտը — դրական փիլիսոփայութեան առաջին գլխաւոր արդիւնքն այն է, որ նա փորձերի վրայ հիմնուելով՝ գտնում է մեր մտաւոր գործողութեանց օրէնքները, այսինքն այն ընդհանուր կանոնները, որոնք անհրաժեշտ են ճշմարտութիւնը վստահութեամբ հետազօտելու համար:

2. Դրական փիլիսոփայութիւնը վերջնական կազմակերպութիւն ստանալով, կը դառնայ ներկայ կրթական սիստեմի արմատական վերանորոգութեան առաջնորդը: Անհրաժեշտ է փոխել այժմեան եւրոպական կրթութիւնը, որը ունի աստուածաբանական, բնադանցական և դժականական բնաւորութիւն, և դնել նրա տեղը դրական կրթութիւնը, որը համապատասխան լինի մեր ժամանակի ոգուն և չարմար՝ ժամանակակից քաղաքակրթութեան կարիքներին: Ասկայն գիտութիւնների բացառական մասնաւորացումը և նրանց միմեանցից անջատելը, անխուսափելի կերպով կազդէն այդ առարկաների դասաւանդութեան վրայ: Իւրաքանչիւր մարդ, որը կամենում է մի ամբողջական աշխարհահայեցողութիւն կազմել, ստիպուած է սովորել առանձնակի բոլոր գիտութիւնները այնպէս, որպէս թէ նա ամեն բանի մէջ էլ մասնագէտ լինէր: Բայց այդ անհնար է, ցոնկա մարդկանց մեծագոյն մասի համար, ունի իսկ ամենալաւ հանգամանքներում: Իսկ դրական փիլիսոփայութիւնը կը տալ ուսանողին այն բոլորը, ինչ որ էական մասն կամ ծուծն է կազմում բոլոր գիտութիւնների մէջ: Ի հարկէ, այդպիսի ընդհանուր դարդացում ունեցողը այնուհետեւ կարող է նուիրուել որևէ մասնագիտութեան:

3. Դիտնական ընդհանրացումների առանձնակի ուսումնասիրութիւնը կը նպաստէ առանձին դրական գիտութիւնների առա-



ջաղիմութեան: Իւրաքանչիւր գիտութիւն սահմանափակուելով որոշ շրջանի մէջ, չէ կամենում իմանալ թէ ինչ է կատարուում իր սահմաններից դուրս: Արանից ծագում է այն երևոյթը, որ կղզիացած մասնագիտութիւնների ա ր ա ն ք ու մ մնում են երևոյթներ, որոնք աչքի չեն ընկնում, ուստի և առանց հետազօտելու են մընում: Իսկ դրական փիլիսոփան, որ ընդհանուր հայեացք է գցում բոլոր գիտութիւնների վրայ, նկատում է ալդ որք մնացած երևույթները և մատնացոյց է անում նրանց վրայ կամ ձեռնարկում է նրանց հետազօտութեան: Եւ իրաւ, մի շարք օրինակներ հաստատում են Աօնտի ասածը: Դէկարտը դտաւ վերլուծական երկրաչափութիւն կոչուած կարեոր գիտութիւնը, համեմատելով ալգեբրան երկրաչափութեան հետ: Աւելի նոր ժամանակներում չարաբերութիւն ստեղծելով մատիմատիկայի և քիմիայի մէջ, մի շատ կարեւոր գիւտ արին, որ է կրկնական չարաբերութիւնների օրէնքը, որը իր կողմից մեծ ազդեցութիւն արաւ քիմիայի վրայ:

4. Ամենից կարեոր և գործնական համարում է Աօնտը դրական փիլիսոփայութեան չորրորդ օգուտը: Կեանքին ուղղութիւն տուողը գաղափարներն են, այսինքն կեանքը կաղմակերպւում և ընթանում է այնպէս, որպէս համապատասխան է մարդկանց գաղափարներին (խելքին, հասկացողութեան, դատողութեան...): Բայց որովհետեւ մարդիկ իրանց գաղափարներով տարբերում են, նույն իսկ հակառակ են իրար, ուստի և ընդհանուր կեանքը շարունակ դանում է անխաղաղ, անհաստատ, ալդպէս ասած՝ լեղափոխական դրութեան մէջ: Ալդ տխուր դրութիւնը մեր ժամանակում ծագում է նրանից, որ միաժամանակ գոյութիւն ունին վերոյիշեալ երեք տեսակ աշխարհահայեցողութիւնները: Աստուածաբանութիւնը, բնագիտութիւնը և դրականութիւնը չեն կարողանում հաշտուել իրար հետ: Իսկ ապացուցում ամեն տեղ լաղթող հանդիսանալով դրական փիլիսոփայութիւնը, կը տալ մարդկանց ընդհանուր գաղափարների մի որոշ քանակութիւն, որոնց մէջ ամենքը համաձայն կը լինեն ու կեանքը կստանալ հաստատուն դրութիւն:

Աօնտի կարծիքով, դրականութեան իրանց էութեամբ բոլորովին հակառակ են մարդկային մտածողութեան երկու ուրիշ ձևերը՝ աստուածաբանութիւնը և բնագիտութիւնը: Առաջինն դրադում է սկզբնապատճառի խնդրով, և չնայելով երկար դարերի աշխատութեան, չնայելով որ բաղմաթիւ գիտնականներ և ոչ գիտնականներ մաշել են և մաշում են իրանց սիրտը ու միտքը, ոյթեր են փնայնում, ժամանակ են գործադրում, բայց վերջ ի վերջոյ ոչինչ չեն կարողանում ոչ հասկանալ, ոչ ապացուցել: Իսկ երկրորդը՝ բնագիտ-



ցութիւնը կամենում է իմանալ առարկաների (տիեզերքի, կեանքի, մարդու, բոլոր երևոյթիների) էությունը, այսինքն թէ ինչ են նրանք ինքն ըստ ինքեան, և նույնպէս ոչինչ հետեանքի չէ հասնում: Իսկ դրական մտածողութիւնը իսկական և մեծ ծառայութիւններ է մատուցանում մարդկային ցեղին: Նրա հետեանքն են բոլոր այն լաղթութիւնները, որ մարդը արել է բնութեան դէմ: Ամբողջ քաղաքականութիւնը դրական մտածողութեան արդիւնքն է:

Մաքառելով աստուածաբանական և բնազանցական մտածողութեան դէմ, Կօնտը չէ կարողանում կանգ առնել հարկաւոր աստիճանի վրայ, և սահմանն անցնելով՝ ընկնում է մոլորութիւնների մէջ: Շեշտելով որ սկզբնական պատճառները, առարկաների էութիւնները և այլն միշտ անրմբռնելի կը մնան մարդկային գիտակցութեան համար, Կօնտը շփոթում է այդ պատճառների և էութիւնների հետ և այնպիսիները, որոնք շատ էլ անմատչելի չեն գիտնական մտածողութեան համար: Օրինակ լուսի, տաքութեան, էլէկտրականութեան երևոյթիների անմիջական պատճառների հետադատութիւնը — հակառակ Կօնտի կարծիքին — բոլորովին խորթ չէ մարդկային գիտակցութեան: Այսը, տաքութիւնը, էլէկտրականութիւնը, այդպէս ասած, շօշափելի, աչքի ընկնող երևոյթներ են, որոնք առաջանում են մի շարք աւելի խորը թաղնուած երևոյթներից (եթերի տատանումից, հիւլէների շարժումներից և այլն): Բէկօնը իրաւացի կերպով պնդում էր, որ բնութեան կարևորագոյն երևոյթները կատարւում են նրա ներսում և անմատչելի են սովորական գիտողութեանը, սակայն շօշափելի երևոյթների օգնութեամբ, ճշմարիտ հետադատը թափանցում է այդ խորութեան մէջ և բացատրում է ներքին երևոյթները, որոնք շօշափելի երևոյթների անմիջական պատճառներն են: Բայց Կօնտը խառնելով անմիջական պատճառները սկզբնապատճառների հետ, բոլորն էլ բնազանցութիւն էր համարում, ուստի և աւելորդ էր համարում նրանց վաթից ընկնելը: Թէ որքան չարաչար սխալւում էր Կօնտը, երևում է հէնց այն հանգամանքից, որ Կօնտի հալածած իբր բնազանցական երևոյթներից սմանք ներկայումս արդէն հետադատուած և պարզուած են:

Ի միջի այլոց Կօնտը բնազանցութիւն էր համարում, որպէս վերը տեսանք, եթերի գոյութեան գաղափարը, որ մեր ժամանակում արդէն բաղմաթիւ փաստերով հաւանական է դարձել: Ի մի ժողովինք այժմ — ասում է Խիօլսօն — այն բոլորը, ինչ որ հիմնուած է եթերի գաղափարի վրայ, ամենաբարդ լուսեղէն երևոյթների որոշումը և նախադաշակութիւնը, նոր անսպասելի երևոյթների դիւտը,



երկնային մարմինների շարժման ուսումնասիրութեան եղանակը, էլէկտրականութեան և լուսի մէջ եղած կապի նախատեսումը, Գերցի ճառագայթները և նրանց լատիութիւնները: Այդ բոլորը միասին վերառած կազմում է մի ծով, որը պակաս լայնատարած չէ, ասլ անհամեմատ աւելի խոր է ու իւր անդունդների մէջ անհամեմատ աւելի բաղմազան քան թէ այն փաստերի ծովը, որոնք հաստատում են Կօպերնիկի համակարգութիւնը և համալխարհային ձգողականութեան օրէնքը, որոնց վրայ հիմնուած է Կօնտի աստղաբաշխութիւնը: Եթերի գոյութիւնը այսօր պակաս հաւանական չէ, քան թէ երկրի պտըտելը իւր առանցքի կամ արեգակի շուրջը: Գրական փիլիսոփայութիւնը, որ արդելում էր պատճառներ որոնելը, կանհետացնէր եթերի գաղափարը:

Բոլոր վերը ասածներից—աւելացնում է լարդելի պրօֆէսօրը—կարելի է եղրակացնել հետեւեալը. Ֆիզիկան չէ գնացել, չպիտի գնայ և չի գնալ Կօնտի ցոյց տուած ճանապարհով: Բոլոր մեծ բաները, որ ստեղծուած են Ֆիզիկայի վարպետների ձեռքով, այն բոլորը, որ բացել է մեր աչքերը մեզ շրջապատող երևոյթները տեսնելու համար, այն բոլորը, որ Ֆիզիկայից բղխելով, դարձել է քաղաքակրթութիւնը շարժող զօրեղ լծակ, որը հարստացրել է մարդկութիւնը գոյութեան կռուի համար անգնահատելի գործիքներով և լառաջընթացութեան միջոցներով—այդ բոլորը ձեռք է բերած այնպիսի ճանապարհներով, որոնք ուղղակի հակառակ են դրական փիլիսոփայութեան ցոյց տուած ճանապարհին: Եւ եթէ Կօնտը ասում է, թէ հիպօտեզները (գիտնական ենթադրութիւնները) երբէք պիտի գործ չունենան երևոյթների ծագման պատճառների հետ, ապա նրան պատասխանում է Ֆիզիկան, թէ միայն այդ տեսակի հիպօտեզներն են տանում դէպի ճշմարտութեան գիտնականութիւնը....

Բնազանցական գաղտնիքների թուին էր դասում Կօնտը նոյնպէս երկնային մարմինների (մոլորակների, աստղերի...) քիմիական կազմութիւնը, մինչդեռ մեր օրերում այդ գաղտնիքը բաւական լուսաբանուած է և օրէցօր աւելի է պարզւում: Գիտութեան մէջ գտել են այդպէս անուանուած «լուսապատկերային վերլուծութիւնը», որը խիստ որոշ կերպով գաղափար է տալիս այն մասին, թէ արդեօք լուսնեակի, արեգակի, կամ որևէ ուրիշ երկնամարմնի կազմութեան մէջ ոսկի, արծաթ, երկաթ և այլ նիւթեր կան թէ ոչ: Օրինակ արեգակի ճառագայթը ընկնում է մի կանթեղի վրայ, և անցնելով նրա միջով լառաջ է բերում գոյնզգոյն լուսապատկեր, (ծիածանի նման): Այդ լուսապատկերը կարելի է ստանալ մի սպիտակ մակերևոյթի վրայ: Խոշորացուցով դիտելով նկատում են նրա



վրայ զանազան սև գծեր, որոնց պատճառը այն նիւթերն են, որ կան արեգակի կրակի մէջ: Այդ սև գծերի ալիպէս թէ այնպէս դասաւորուած լինելը դադարաւ է տալիս այս ու այն նիւթի մասին: Ուրեմն այդ խնդրին վերաբերեալ Աօնտը չարաչար սխալուած էր:

Աօնտը ընդհանրապէս դէմ էր հիպոտեզներին: «Հիպոտեզները» այնպիսի են թաղրութիւններն են, որոնք թէև դեռ ասպացուցած չեն, բայց հաւանական են թւում ժամանակի ընթացքում և օրէցօր աւելի ու աւելի հաւանական են դառնում: Այդ հիպոտեզները մի տեսակ ամբողջացնում են, լուսաբանում են գիտական աշխարհահայեցողութիւնը և շատ անգամ նորանոր գիտերի առիթ տալիս և հէնց իրանք էլ վերջ ի վերջոյ պարզւում են: Այդ հիպոտեզների թուին է պատկանում, օրինակ, քիմիական ձողականութեան դադարը: Գիտութիւնը ենթադրում է, որ նիւթերը բաղկացած են ամենամիոքրիկ մասնիկներից, հիւլէներից, որոնց մենք խոշորացուցով էլ չենք կարողանում տեսնել: Հիւլէները փոխադարձաբար ձգւում են դէպի միմեանց և ալլն... Այդ բանը մենք չենք կարող աչքով տեսնել, բայց նրան ընդունելուց լետոյ մեզ համար հասկանալի են դառնում քիմիայի շատ երևութներ և օրէնքներ, որոնց արդէն մենք տեսնում ենք: Ժամանակների ընթացքում շատ հիպոտեզներ կարող են ասպացուցուել, ուստի Աօնտի կարծիքը, թէ նրանք բնազանցական բնաւորութիւն ունին, սրանով հերքւում է: Եթէ Աօնտի խորհուրդը լսելով, գիտնականները չյանդգնէին ընկնելու «ամենամութ» հարցերի ետևից, ապա գիտութիւնը բոլորովին կանգ կառնէր, որովհետև այն՝ ինչ որ այսօր բնազանցութիւն է երևում, վաղը, հետազօտութեան նորանոր «միջոցներ» գտնելուց լետոյ, բոլորովին բնական և մեր գիտակցութեան մատչելի կը հանդիսանան: